Թող բոցավառի վաղուան Հայաստանի կարօտին կրակը բոլոր, բոլոր հայերու հոգիներէն ներս, Արարատեան դաշտէն մինչեւ Ափրիկէի խորերը:

ՀԻՆՎ ՏԱՐԻ ՅԵՏՈՅ

Կապոյտ, կապոյտ վանայ ծով, հայու ձեռքերուն կարօտ մնացած անջրդի դաշտեր, երազային, մանիշակաղոյն շղարչի մէջ կորսուած Սիփան ու Նեմրուծ: Երբ ձեզ չէի տեսած, միտքիս մէջ արձանագրուած էիք պատմութեան ու աշխարհագրութեան դասերով: Ձեզ տեսնելէս վերջ, աչքերուս մէջ էք, հոգիս մէջ ու անցնող հինգ տարիները կը հաստատեն, թէ ձեզ մոռնալը անհնարին է, յիշողութեամբ անգամ ամէն ըրպէ կարելի է հիանալ ձեր գոյներուն ու բոլորիկն:

Դարձեալ Գագիկեան Աղթամարն է աչքերուս առջեւ: Դարձեալ Արտամետի խնձորներուն բոյուն է ունեզբերուս: Դարձեալ Արտամետի գերեզմանատան ջրախափուած տապանաքարերն են աչքերուս առջեւ, կիսափուլ մատուռն է, զոր միայն քանդելով չէ, որ պղծած են պղծալի ձեռքեր, այլ անասելի է միայն իրենց վայել հայհոյանքներու տարափով կաւիճով արձանագրութիւններ կատարած անոր պատերուն վրայ:

Մէկը կը բարձրացնէ ճարտարապետական անկողնի կողմով մը: Ուրիշ մը յիշոցներ կ'արձանագրէ նոյն պատերուն վրայ:

Դարձեալ Նարեկայ վանքին կանգուն մնացած միակ պատն է աչքերուս առջեւ: Նարեկայ գիւղին այգեստանները, պողպատանները: Նարեկացին արդեօք ա՛յս պատին տակ ունեցաւ իր հանճարեղ գեղումները, պատկերներու, համեմատութիւններու իր անսպառ գանձերը, արդեօք ա՛յս պատին տակ յանձնեց ապագայ դարերուն:

Այդ գիրքերու գիրքը՝ Նարեկը, որ դարեր շարունակ դարձաւ հայ մարդուն բարձի գիրքը, հայ հիւանդին բժիշկը: Նարեկայ վանք, Նարեկայ վանքի կան-

տերուն մէջ: Ո՛ւր էր Նիրմեան Հայրիկը, ո՛ւր էր Անոր պատգամը, երբ Մեծ Հայր հայ գիւղացին կը պսակէր նաեւ հայ հողին հետ, որպէսզի հայը չբաժնուէր իր դարաւոր հայրենիքէն:

Շուշանց գիւղ, բարձրադիր դիրքդ աչքերուս առջեւն է: Բանաստեղծ եղած են քեզ հիմնողները, մեր հայրերը: Քեզ մէջ դէպի վանայ ծովը բացուող տեսարանը բանաստեղծ կրնայ դարձնել քարերն անգամ: Անունդ անփոփոխ մնացած էր:

Վան քաղաք, իսկ ինչ մնացած էր քեզմէ: Դարձեալ աչքերուս առջեւն է անկրկնելի Այգեստանը, որուն էջմիածնագլուխէ թեկեղեցին զոհ գացած է աւերիչ ձեռքերու: Քաղաքամէջը աւերակ է: Ուրարտական արձանագրութիւնները ողջ են ու կը շարունակեն դարերուն պատմել մեր պայքերուն սխրանքները:

Բերդին կատարը գտնուող աշտարակը աչքերուս առջեւն է, ուր ծածանած է հայկական դրօշը՝ վանի ժողովուրդին յաղթանակի օրերուն: Կարծես այդպէս ըլլար Արամը, մեր այցելութեան ժամանակ: Ան իր ֆիզիքական տկարութեան դիմաց ունէր հոգեկան անբեկանելի ուժ մը դարերէն եկող, որպէս հայ պետական գործիչի տիպար:

Վան, Վասպուրական մեր աշխարհ, եւ հատիկ-հատիկ արձանագրեցի իմ տպաւորութիւններս, ասկէ հինգ տարի առաջ, երբեմն կարկուտի, սաստկութեամբ, բազմաճարիւր հայ մարդերու սիրտերուն վրայ: Ուզեցի արևելի հայ մարդուն սիրտը, որ արժանիք չէր հանդէպ հայ մարդուն ունեցած անմարելի սիրոյ կրակը:

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

ՇՈՒՇԻ

Գերեզմաններ կան այստեղ Որոնք փոխան լռութեան Անդուլ, անվերջ կը խափն

Որոնք մարմնով բացակայ Բայց ոգեղէն առաքեալ Յուշարարի պէս պահուած

Կը հանկերգեւ, կը կրկնէ՝ Թէ մեր կեանքը այս խաղաղ, կը պահուի պէն-պրահով:

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Շուշի, 29 Օգոստոս 2003

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ



Հայութեան համար, Հայաստանի համար տրոփող սիրտ մըն է Թորոս Թորանեան բանաստեղծը: Հայ շնչաւոր թէ՛ անշունչ արժէքներու վրայ դողացող աչք մը, պահպանող ձեռք մըն է Թորոս Թորանեան բժիշկ-գրագէտը, եւ միաժամանակ՝ հազուագիւտ շրջուն պատգամաւորը մշակոյթի, հայասիրութեան եւ հայապանծացման:

Որոնումի, նուիրումի եւ զոհաբերութեան կեանք մը անաւասիկ, որ հասած է 75ամեակի փառաւոր հանգրուանին: Քիչ մը առաջ, քիչ մը ետ, քիչ մը աւելի, քիչ մը պակաս բեռնաւոր՝ ուղեկիցներ ենք բոլորս ալ, ու կ'երթանք «դէպի աղբիւր լոյսին»...

ՉԱՐԵՆ ԽՐԱՆՈՒՆԻ

Թորանեանի հեղինակութիւններէն կը յիշուին շուրջ ութսուն եւ նոյն թիւով իր կողմէ խմբագրած հատորներ: Ո՛չ իր ստեղծումները եւ ոչ ալ խմբագրած հատորներուն մէկ կարեւոր տոկոսը չեն կրնար անշուշտ դիմանալ ժամանակի քննութեան: Ու ատոր պատճառ, փարատաբար թուի թերեւս, պէտք է փնտել իր միւս արժանիքին մէջ, որ իր արագ խանդավառութեան չափազանց ուժգին բունկումը եղաւ յանախ: Իր անունը կրող հարիւր յիսուն հատորներուն մէջ ամուր արժէքներուն փայլը չի շողար այնքան, որքան կը ծփայ իր անձին բարութեան լոյսը...

Ու ափկա գանցաւելի արժանիք մը չէ: Պիտի բեկինք տակալին, - երանի այն գրակառութեան, որ Թորոս Թորանեան մը ունի իր ծոցին: Մենք ունինք այդ բազմեռանդ ուժը:

Նրանի մեզի...

ՊՕՂՈՍ ՄԱՂՊԵԱՆ

Թորանեանը բոլորովին տարբեր խմոր ունի: Ան անսակարկ հայն է, անխարդախ հայը, հայ՝ որ իր արեան մէջ չի հանդուրժեր կաթիլ մը իսկ օտար ապրում խառնելու: Իր ձայնը հզօր կը հնչէ հոն՝ ուր հայկականութիւն կայ, կամ հոն՝ ուր հայկականութեան պակասը կայ: Իր ձայնը կը հնչէ սրահներուն պատերը փլցնելու չափ ուժեղ, որովհետեւ այդ ձայնը պէտք է հասնի ո՛չ միայն ապրուստ սերունդներուն ականջներուն, այլ նաեւ այդ սերունդներէն զալիք ապագայ հայորդիներուն: Թորանեանի գլխաւոր յատկութիւնն է մարդող մէջը հայը կերտել, հայը արթնցնել: 55 տարեկան իր վառատակին մէջ այս 75ամեայ երիտասարդը արդեօք քանի հայ ստեղծած է երկրագունդին վրայ:

ՈՒՊԵՐ ՀԱՏՏԵՃԵԱՆ

Թորոս Թորանեանը նման է Քեռի Թորոսին իր բնաւորութեան մայր գիծով: Անոր պէս ամուր է եւ տուրուտ, կ'ուզէ նաեւ անոր պէս երկար ապրիլ: Իր ծրագիրն է 120 տարի գոյատեւել... Բայց մանաւանդ ծառայատէր է, Սանասարի քեռիին նման: Ներկայ է միշտ երբ կոչ կ'ըլլայ իրեն: Ներկայ՝ նաեւ, երբ մարդ չի կանչեր զինք, բայց ինք պարտաւանութիւն կը գայ գործի լծուելու: Տարիներէ ի վեր իրար չտեսած բարեկամները քով-քովի կը բերէ, իրարմէ խոսվածները կը հաշտեցնէ. իր անմար խանդավառութեամբ կը վարակի բոլորը: Ան մարդիկը կը սիրէ սիրտին խորքէն կ'ուզէ օգտակար ըլլալ անոնց. ազգակիցները կը սիրէ անձէն աւելի եւ պատրաստ է գոհուելու անոնց համար: Ինձի ծանօթ լաւագոյն քանի մը մարդերու ու հայրերէն մէկն է: Մեր օրերու Քեռի Թորոսն է պարզապէս:

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆ

Հայկական Սփիւռքի ամէնէն բեղուն գրիչներէն է Թորոս Թորանեան անվարանօրէն: Հայ մամուլի տարբեր օրկաններուն, - օրաթերթ, շաբաթաթերթ, ամսագիր, պարբերաթերթ, - նիւթ հայթայթող յօդուածագիր-աշխատակից, որ բազմաբնոյթ գրութիւններով գոհացում կու տայ հայ մամուլի ընթերցողներուն: Քանակը, երբեմն աւելի՛ կը կշռէ քան որակը, - ուրիշ հարց-կարեւորը այն է, որ ինքնուրույն աշխատակցութիւններու տագնապէն տառապող մեր մամուլին համար, Թորոս Թորանեանի կամաւոր աշխատակցութիւնները հաճելի ներկայութիւններ են հետաքրքրութեամբ կարդացուող:

ՊԵՊՈ ՍԻՄՈՆԵԱՆ

Երեւոյթ է Թորոս բժիշկը, կամ՝ բժիշկ Թորանեանը: Խանդավառութիւն մը անսպառ, որ կը բխի անկասկած իր արմատներէն, որոնք անքան սերտ կապով կապուած է ինք: Նոյն ատեն ցանկանալի անձնաւորութիւն մը, որուն նմանը թերեւս երկար տարիներ չունենանք: Սիրտ, հոգի, միտք, միացեալ ոգեւորութիւն մը, որ իր անգնահատելի օգուտը ներարկեց հանրային մեր կեանքին մէջ: Եզակի կենսագրութիւն մը, որուն արժէքն ու արժանիքը կը չափուի այսօր, ճիշդ իր ժամանակին:

ՇԱՀԱՆԳՈՒԽՏ

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ՆԵՐՇՆՉԱՐԱՆ

ՊԱՏՈՒՐԱՆԸ

Ստորև կը ներկայացնենք համացանցում քաղաւած ոգեշնչող դրուագ մը, որուն հեղինակը անծանօթ է:

Երկու ծանր հիւանդներ կը բաժնեկցէին հիւանդանոցին սենեակներէն մէկը: Անոնցմէ մէկուն առիթ կը տրուէր օրական մէկ ժամ անկողինին վրայ նստելու, որպէսզի իր թոքերուն մէջ հաւաքուած հեղուկը դիւրութեամբ դուրս գայ: Այդ հիւանդին անկողինը կը գտնուէր սենե-



եակին միակ պատուհանին կողքին: Անոր «դրացի» հիւանդը պառկած հիւանդը կը նստէր, ան իր սենեակակիցին կը նկարագրէր այն ամէնը, զոր կարելի էր տեսնել պատուհանէն: Շնորհիւ այս նկարագրութիւններուն միւս անկողինին մէջ գամուած հիւանդը օրական մէկ ժամուան համար կ'ապրէր աւելի ընդարձակ աշխարհի մը մէջ, որ հարուստ էր կենսունակութեամբ եւ գոյնեղով:

Պատուհանէն կ'երեւէր հանրային պարտէզ մը եւ գեղեցիկ լճակ մը: Բոզեր եւ սագեր կը սահէին ջուրին վրայ, մինչ մանուկներ իրենց շինած փոքրիկ նաւակներով կը զուարթանային: Երիտասարդ սիրահարներ թե թեւ մտած կը քալէին գոյնզգոյն ծաղիկներուն մէջ: Մեր եւ հսկայ ծառեր կարծէր կ'օրհնէին պարտէզը, եւ հեռուն, կապոյտ երկինքի տակ, կարելի էր տեսնել քաղաքին համայնապատկերը:


Մինչ պատուհանին նստած հիւանդը այս բոլորը կը նկարագրէր իրենց մանրամասնութիւններով, սենեակին միւս կողմը պառկած մարդը կը փակէր իր աչքերը՝ երեւակայնով այդ բոլորը:

Օր մը, յետմիջօրէին, պատուհանին կողքին նստած մարդը նկարագրեց դիմացը տեղի ունեցող շքահանդէս մը: Թէեւ պառկած հիւանդը չէր լսեր շեփոքներու եւ տօնակատարութիւններու ձայներ, սակայն կրնար իր մտքի աչքով տեսնել այն բոլորը, որ իրեն կը պատուէր:

Անցան օրեր եւ շաբաթներ: Առաւօտ մը, երբ հիւանդապահուհին սենեակ մտաւ, նկատեց, թէ պատուհանին կողքին պառկած մարդը մահացած էր: Յուզուած՝ ան կանչեց հիւանդանոցի պաշտօնեաները, որպէսզի տանին անոր մարմինը: Անմիջապէս որ պատշաճութիւնը կ'արտօնէր, միւս հիւանդը խնդրեց փոխադրուիլ պատուհանին քով: Հիւանդապահուհին սիրով ընդունաջեց եւ գայն պատուհանին քով անկողինը տեղադրելէ ետք դուրս ելաւ սենեակէն:

Դանդաղօրէն հիւանդը արմուկին վրայ յենելով իր առաջին նայուածքը նետեց դուրսի աշխարհին, որպէսզի այդ աշխարհը դիտելու հանոյրը ունենար: Ցաւերը զսպել փորձելով նայեցաւ դուրս: Պատուհանին դիմաց պատ մը կար միայն:

Աւելի ուշ մարդը հարց տուաւ հիւանդապահուհիին, թէ արդեօք ինչու իր սենեակակիցը պատուհանէն երեւցող հիւանդի բաները նկարագրած էր: Հիւանդապահուհին ըսաւ, թէ իր սենեակակիցը կոյր էր եւ չէր կրնար նայիսկ այդ պատը տեսնել:



ԵՐԱԶԱՅԻՆ «ԿՈՒԿԸԼ»Ը

«Կուկլը» փնտուտութի գրուածքները դարձած է աւելին, քան պիզնէս մը: Ամառն արդէն մշակութային երեւոյթ մը կը հանդիսանայ:

Եթէ յաջողութեան չափանիշը տարբեր լեզուներու մէջ օգտագործուող բայի վերածուելն է՝ «Կուկլը» հպարտանալու պատճառներ ունի: Հինգ տարի առաջ, երբ Սթենֆորտ համալսարանի երկու ուսանողներ հիմնեցին ընկերութիւնը, անոնք «Կուկլը» բառը ընտրեցին՝ փոխակերպելով «Կուկլը»-ը, որ կը նշանակէ 1 թիւը, որուն կը յաջորդեն զերոներ: Օրին անոնց նպատակն էր համացանցի վրայ տեղադրուած հսկայական ծաւալով տեղեկութիւնները դասաւորել եւ մատչելի դարձնել: Այսօր տանտիրիները խոհադիրներ «կը կուկլընեն», հիւանդները բժիշկի երթումը չէ առաջ ախտաճանաչումներ «կը կուկլընեն» եւ այլն: Մէկ խօսքով,

ճշդած են շուրջ 15 միլիարտ տոլար: Արդեօք «Կուկլը» պիտի կարենա՞յ «Ամառն արդէն մշակութային երեւոյթ մը կը հանդիսանայ» խոհադիրները խոհադիրները խոհադիրները:

ՇԱՀԵՐՈՒ ՓՆՏՈՒՄ

Բնականաբար «Կուկլը» կը փորձէ խուսափել «Նէթսքէյփի» ճակատագրէն: Ահա թէ ինչու՝ «Կուկլը»-ի հիմնադիրները, որոնք իրենց 20ականներուն մէջ էին, 2001ին հրախրեցին 46ամեայ էրիք Շմեթը, որպէսզի ստանձնէ գլխաւոր գործադիր տնօրէնի պաշտօնը: Շմեթ իր փորձառութեամբ եւ «հասունութեամբ» յարմար անձն էր «Կուկլը»-ի գաղափարով համակարգի մը վերածելու: Շմեթ կը գիտակցէր, թէ օրական 200 միլիոն փնտուտութի կը կատարուէր «Կուկլը»-ի վրայ, եւ այս մէկը շահարկելու ձե-

կը վճարեն այդ ծանուցումին համար միայն, երբ այցելուներ «քլիք» կ'ընեն անոր վրայ:


«Մեթակրուփ» խորհրդատու ընկերութեան համաձայն, մինչեւ 2006 վճարովի փնտուտութի գրութիւններու եւ վերոնշեալ ձեւով ծանուցումներու շուկան 5 միլիարտ տոլարի պիտի հասնի: Այս շուկան «Կուկլը»-ի շահին զխաւոր աղբիւրներէն մէկը կը հանդիսանայ: Այսօրուան դրութեամբ «Կուկլը» տարեկան 150 միլիոն տոլարի շահ կ'ապահովէ միայն:

Սակայն, այդ շուկային տիրապետելը դիւրին պիտի չլլայ, երբ «Իպէյ»-ի եւ «Նահու»-ի նման մրցակիցներ ունի «Կուկլը»: «Նահու»-ն՝ միայն փնտուտութի եւ կայքերու դասաւորման շահեկան դրութիւններ ունի, այլ նաեւ ե-նամակի ձրի ծառայութիւններ ունի եւ գնած է «Կուկլը»-ի մրցակիցներ «ԱլթաՎիսթա», «Օլ Ծը Ուէյ» եւ «Ինթընէթ» փնտուտութի համակարգերը:

«Մայքրոսոֆթ»-ի կարգին, «արեան հոտ կ'առնէ»: Ընկերութիւնը այժմ կը պատրաստէ փնտուտութի իր ուրոյն համակարգը, որ հրապարակ պիտի իջնէ յառաջիկայ տարի:

Նկատի առնելով սուր մրցակցութիւնը եւ համացանցի միջոցով դրամ ապահովելու շատ մը նախաձեռնութիւններու ձախողութիւնը, արդեօք «Կուկլը» պիտի յաջողի՞ դառնալ միլիոնաւոր տոլարներ «գտնող» կայք մը, թէ ոչ պիտի բաւարարուի միլիոնաւոր կայքերու մէջ փնտուտութի կատարելով:

«ՏԻ ԻՔՈՆՈՍՏԻՍԹ»
(Համադրաբար)



«Կուկլը» կը ծառայէ բոլորին, ամէնուրեք: Փնտուտութի գրութիւններուն մէջ «Կուկլը» անկասկած որ անմրցելի է: Ան ո՛չ միայն համացանցի ամէնէն աւելի ժողովրդականութիւն ունեցող փնտուտութի համակարգն է, այլ նաեւ կ'օգտագործուի «Նահու»-ի եւ «էյ.Օ.էլ.»-ի կողմէ: Համացանցին վրայ մարդոց այցելած կայքերուն 75 առ հարիւր «Կուկլը»-ի «յանձնարարութեամբ» կ'ըլլայ:

Վերջին տարիներուն, «Կուկլը»-ի պատասխանատուներ կը փորձեն գտնել ձեւեր՝ այս հսկայական ներուժը նիւթական մեծ շահերու վերածելու: Կը թուի, թէ արդէն որոշում տրուած է յառաջիկայ գարնան «Կուկլը»-ը բաժնետոմսերու շուկայ «իջեցնելու»: Տնտեսագէտներ «Կուկլը»-ի գինը

ըրաւ ուսումնասիրուած եւ փնտուտուած նիւթին համապատասխանող ծանուցումներ տեղադրելն էր «Կուկլը»-ի գտած կայքերուն ցանցին կողքին: Մանուցողներ կը սիրեն այս դրութիւնը, որովհետեւ

ՄԱԿԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ՊԻՏԻ ՔՆՆԱՐԿԵ ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Դեկտեմբեր 10 - 12ին, Ժընեւի մէջ տեղի պիտի ունենայ «Ուլլա Սամիթ Ան Ինֆորմէյշըն Սոսայթիթի» խորհրդաժողովը: ՄԱԿի կողմէ կազմակերպուած այս աննախընթաց ձեռնարկը, առաջին անգամ ըլլալով համաշխարհային մարմնի պատմութեան մէջ, պիտի անդրադառնայ տեղեկատուական արհեստագիտութեան կարեւորութեան եւ անոր առնչուող հարցերուն:

Խորհրդաժողովի կազմակերպիչն է հնդիկ դիւանագէտ Նիթին Տեսայ, որ նաեւ Քոֆի Անանի խորհրդատու է: Ան նախապէս կազմակերպած է շարք մը համաշխարհային մակարդակի խորհրդաժողովներ:

Խորհրդաժողովին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն շուրջ 60 երկիրներու ղեկավարներ, ինչպէս նաեւ տեղեկատուական արհեստագիտութեան բնագաւառին մէջ գործող մեծ ընկերութիւններու գործադիր տնօրէններ:

«Խորհրդաժողովի գաղափարը յղացանք 1999ին, երբ ամէն մարդ կը խորհէր, թէ այս արհեստագիտութիւնը



պիտի լուծէ մեր բոլոր հարցերը» կը բացատրէ Տեսայ: Անոր համաձայն, այսօր նման խորհրդաժողով մը կատարելու աւելի կենսական է քան երբեք:

Տեսայի համաձայն այս խորհրդաժողովի միջոցով ՄԱԿ կ'ուզէ իրագործել երկու բան, որոնց առաջինն է տեղեկատուական արհեստագիտութեան օգտագործման շուրջ միացեալ քաղաքականութեան մը ձեւաւորումը: Այսպէս օրինակ, կարելի է համաձայնիլ մինչեւ ստեղծել թուական մը աշխարհի բոլոր զարոյցները համացանցով օժտել: Այս համաձայնութեանն է սեղանակերպութիւններ, ընկերութիւններ եւ բարեսիրական կազմակերպութիւններ կրնան միասնաբար աշխատիլ որպէսզի իրականացուի այս ծրագիրը:

Խորհրդաժողովի երկրորդ նպատակը միջազգային ընտանիքին ներկայացնելն է տեղեկատուական արհեստագիտութեամբ մարդկային ընկերութեան ծառայութիւն եւ նպաստ բերել յաջողած ծրագիրներ, որպէսզի նման ծրագիրներու ձեռնարկը վարակիչ դառնայ:

Պատրաստեց՝ ԽԱԶԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ

Ն. Ս. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊՕՂՈՍ Բ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ ԳԱՀԱԿԱՆՈՒԹԵԱՆ 25ԻԳ ՏԱՐԵԳԱՐՉԻՆ ԱՌԻԹՈՎ ԸԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Պիտի մատուցանել եւ յաւուր պատշաճի իր հայրապետական պատգամը պիտի փոխանցէ Ամենապատիւ եւ Գերերջանիկ **ՏԵՐ ՆԵՐԱՍԵՒ ՊԵՏՐՈՍ ԺԹ.**

Կաթողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Դայոց

Կիրակի, 9 Նոյեմբեր 2003, առաւօտեան ժամը 11:00ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ - Ս. Եղիա Աթոնանիստ եկեղեցւոյ մէջ:

Հատուցանելու սիրով կը հրաւիրուին ներկայ ըլլալու այս հոգեպարար արարողութեան եւ լսելու Ընդհանուր Տիրոջ պատգամը այս առիթով:

ԴԻՒՆ ԸԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԵՈՒԹԵԱՆ

«ԱԶԳԱԿ»-Ի ՀԵՌԱԶԱՅԻՆ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԱՐԵԳ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏԵՐԱՆՈՒՄԸ ԲԵՍԱՂԻՉ՝ ԴԱԽԹ ՅԱԿՈՐԵԱՆ ԿԵՐԱՍՈՒՏ Արձանագրութիւնները տեղի կ'ունենան Շաբաթ օրը, ժամը 11:00-1:00 Լեւոն Շանթ կեդրոնին մէջ, Ա. յարկ:

ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

www.hamazkayin.com

Մանկապատանեկան

ՄԵՐ ԵՐԿՐԱԳՈՒՆՏԻՆ ԳԱՆՁԵՐԸ



Ներկայիս մարդկութեան կեսն առնուառ կապի բաղադրանքները (ինչպես՝ Ասիոյ մէջ Հոնկ Զոնկ քաղաքը), ունի բանի մը միլիոն բնակիչ: Մինչ ներկայ գուճուկ վրայ ուրիշ վայրերու մէջ աւազէ, սառնոյց, անտառէ կամ կղզիներէ կազմուած ընդարձակ տարածքներու վրայ եւս մարդ արարածը կրցած է ապրիլ:

Շտեմբար մեր աչքերը լաւ բանաճը ծանօթանալու համար մեր ներկայ գուճուկի հրաշալիքներուն:

Սահարան՝ աշխարհի ամէնէն ընդարձակ անապատը

Իմ անունս Ախալա է եւ ես թուրքիկ ցեղախումբն եմ: Մենք կ'ապրինք աշխարհի ամէնէն մեծ անապատին՝ Սահարային մէջ: Հոն, օրուան ընթացքին ջերմաստիճանը կը հասնի աւելի քան 35 աստիճանի: Իսկ տարուան ընթացքին միայն 10 սմ անձրեւ կը տեղայ: Ոսկեգոյն աւազակոյտերը մեր հողամասերն են: Մենք անդադար այս ընդարձակ անապատը կը կտրենք



Ուղտերու կարաւաններով:

Երբեմն յանկարծ անապատին մէջ մեր առջեւ կ'երեւի ովաստի մը կանաչութիւնը: Շնորհիւ իմ ժողովուրդիս մարդոց հմտութեան՝ ստորերկրէն ջուր կը ժայթքի եւ բուսականութիւնը կը ջրէ:

Ուղտը մեր ընկերակիցն է: Ան ո՛չ տաքէն, ո՛չ ալ ծարաւէն կը վախճայ: Երբ ան կը խմէ, կրնայ 10

վայրկեանէն 135 լիթր ջուր կ'լլել:

Հսկայական եւ խորունկ անտառ մը՝ Ամազոնը

Իմ անունս Իբալէ է եւ կարմիր հնդիկ եմ: Ես կ'ապրիմ Պրազիլ, աշխարհի ամէնէն ընդարձակ անտառին մէջ: Հոս ծառերը շատ բարձր են, անոնք երբեմն 40 մետրի կը հասնին: Արեւուն ճառագայթները հազիւ կը թափանցեն մինչեւ անտառին խոնաւ եւ խեղդուկ խորքերը: Իմ ցեղախումբս մանիթ բոյսը կը մշակէ անտառին



ծառերէ գերծ պղտիկ հողաշերտի մը վրայ: Սակայն մենք կ'ապրինք յատկապէս որսորդութեամբ եւ ձկնորսութեամբ: Իմ տարիքիս միւս պղտիկներուն նման, ես արդէն դիտեմ նետ եւ աղեղ գործածել:

Գիտէի՞ր, թէ պղտիկ թուրքիկները չեն վախճար մարդ արարածէն: Ճիշդ է, որ Ամազոնի մէջ անասունները թագաւոր են: Ամէն օր անտառին մէջ կ'արձագանգեն կապիկներուն, թուրքիկներուն կանչերը, միջատներուն սզզոցները:

Մեր տունները շինուած են ցիցերու վրայ՝ ամբողջ Ամազոն գետի երկայնքին: Անտառը այնքան խիտ է, որ մենք հիմնականին մէջ կը տեղափոխուինք նաւակով:

Կրինլէնտ՝ բեւեռին մօտ սառած ցամաքամաս մը

Իմ անունս Վերա է եւ ես կ'ապրիմ Կրինլէնտի մէջ, Հիւսիսային բեւեռին մօտ: Մենք կ'ունենանք աշխարհի ամէնէն ծանր ձմեռները: Ջերմաստիճանը կ'իջնէ - 45ի: Վեց ամիս

ներու ընթացքին արեւը հազիւ կը լուսաւորէ սառած ծովափը, ուր բանտարկուած կը մնան ձկնորսութեան նաւակները՝ սառած ովկիանոսին ջուրերուն մէջ: Սակայն ես կը սիրեմ ապրիլ այս շրջանին մէջ, այս հողին վրայ, զոր իմ ինտիմ պայերս գիտցած են ընտելացնել:


Իմ հայրս ժամեր կ'անցընէ սառած ծովափին վրայ կեցած՝ իր հեռադիտակով դիտելով, սպասելով փոկերուն եւ կաքաւներուն, որովհետեւ մենք կ'ապրինք շնորհիւ ձկնորսութեան եւ որսորդութեան:

Կրինլէնտի մեր շունները շատ զօրաւոր եւ տոկուն են: Տասը շուններ կրնան քաշել 400 քիլո ձուկով բեռնաւորուած սահնակ մը: Անոնք շնորհիւ է, որ մենք կրնանք տեղափոխուիլ մեր սահնակներով:

Իսկ եթէ սառած ջուրերը յանկարծ կոտորուին, անոնք կրնան լողալ: Ձիւնի շարժանիւնները ասիկա չեն կրնար ընել:

Ովկիանոսին մէջ կորսուած Փոլինեզիան կղզիներ

Իմ անունս Հինանօ է եւ ես կ'ապրիմ Պորա Պորա, իսպանական Ովկիանոսի հրաբխային մէկ կղզիին վրայ: Հոն օդը միշտ տաք կ'ընէ, 21 - 35 աստիճանի միջեւ: Լեռները կը սուզուին ծովափին փերուզակազոյն ջուրերուն մէջ: Ես յաճախ հոն կ'երթամ գունաւոր ձուկերուն ընկերակցութեամբ լողալու համար: Այդ ջուրերուն վրայ պտտելու համար մենք կը տեղափոխուինք պղտիկ նաւակներով: Սակայն Փոլինեզիան միւս կղզիներ



երթալու համար, նախընտրելի է օդանաւով տեղափոխուիլ:

Փոլինեզիան հնդկներու կուզենիներու երկիրն է: Անոնք շատ գեղեցիկ են իրենց խորտուրտ կոճղերով եւ դէպի երկիրն քարձրացած լայն տեքւներով:

ԿՈՆԱՊԿԻ ԿԸ ՅԱԲԻ

Կոնապիկը կը ցաւի, շուրջինները կը նշմարեն, թէ ծռած կը քալես... Ի՞նչ կը պատահի:

Ողնայարդ կազմուած է կարճ ոսկորներու խումբով մը. այս ոսկորները ողնաշարը կը կազմեն:

Ողնայարդը կը շարժէ ամբողջ մարմնի ծանրութիւնը, ինքն իր վրայ կը դառնայ, երբ դուն դառնաս, կամ՝ երբ կը ծոխ: Հետեւաբար ան շատ կ'աշխատի: Կարգ մը ողնաշար միջին գտնուող յոգեբոլ կամ կոնապի մկանները կրնան ցաւիլ:

Ի՞նչ ԸՆԵԼ
- Ընտրէ ոչ շատ կակուղ անկողին մը եւ նախընտրաբար խուսափէ մեծ բարձրէն, որոնք կրնան «կտրել» վիզը:

- Դասարանին մէջ յիշէ միշտ նստիլ կոնակը աթոռին յենակին փակած, երկու ոտքերդ գետին հաստատած:


- Ընտրէ դպրոցի պայուսակ մը, զոր կրնաս կոնակի վրայ շարժել, որպէսզի ստիպուած չըլլաս միայն մէկ կողմով բռնելու: Եւ ամէն օր հետո տար միայն այդ օրուան պէտք ունեցած դիրքերդ եւ առարկաներդ:

- Վերջապէս, կոնակի մկանները զօրացնելու եւ կոնակը հանգչեցնելու համար կանոնաւոր ձեւով փորձէ լողալ:



ԽՈՒՍԱԳԻՐ

ԽՆՁՈՐՈՎ ՔՐԷՓ



Աշունը խնձորներու եղանակն է: Իսկ եթէ դուն կը սիրես այս պտուղները, ահա ուրիշ ձեւ մը՝ զանոնք ճաշակելու համար:

Պէպր ունիս (4 հոգիի համար)
2 խնձոր, 200 կրամ ալիւր, 2 հաւկիթ, 140 կրամ շաքար, 1 գաւաթ կաթ, քիչ մը վանիլ, պտղունց մը աղ, պտղունց մը կասիս, 1 ստրճի դգալ կարագ:

1) Հաւկիթներուն ճեղմուցը բաժնէ դեղնուցէն: Իրարու հետ խառնէ ալիւրը, կասիսը, շաքարը, վանիլը, եւ աղը խորունկ ամանի մը մէջ: Աւելորու հաւկիթի դեղնուցներն ու կաթը եւ լաւ մը զարկ գտնոնք:


2) Խնձորները կեղուէ: Չանոնք չորսի բաժնէ, միջուկի բաժինները հանէ, եւ զանոնք մանրէ մեքենային մէջ, ապա աւելցուր խմորին վրայ:

3) Տապակին մէջ քիչ մը կարագ դիր եւ զօրաւոր կրակի վրայ հալեցուր: Տապակին մէջ դիր խմորէն բաժին մը: Չափահասէ մը խնդրէ, որ քեզի օգնէ քրէփները եփելու գործողութեան ընթացքին:


4) Մօտաւորապէս 3 վայրկեան ետք քրէփը դարձուր եւ ձգէ, որ միւս կողմը եփի մօտաւորապէս 2 վայրկեան: Դարձեալ քիչ մը կարագ աւելցուր՝ յաջորդ քրէփը եփելէ առաջ:




Ժ Ա Մ Ա Ն Յ



Կետերը իրարու միացուր 1 - 29՝ գտնելու համար պահուած պատկերը:



Կրնա՞ս գտնել իւրաքանչիւր կովին ծաղիկը:



Կրնա՞ս գտնել պատկերներուն ձիշո շարքը՝ հասկնալու համար պատահածը:

Պատրաստե՛ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

«ԱՉԳԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ
Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանումը հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՁԵՒ ԵՐԵՎԱՆԻՆԻ ՕՒՄՐԸ 5:00:
ՄԱՀԱԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահազ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:



ԱՆՍԽԱՎ ԳՐԵՆՔ

Եթէ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտ ես. մասնակցէ՛ «Պատիկ - Մատիկ»-ի հայերէն ուղղագրութեան մրցումին:
- Մրցումին կրնան մասնակցիլ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտները:
- Արձանագրութիւնները տեղի կ'ունենան 10 Նոյեմբերէն 2 դեկտեմբեր. հեռաձայնելով 01 - 260115 թիւին. երկուշաբթիէն Ուրբաթ օրերը. կեսօրէ ետք ժամը 3:00էն 5:00:
- Մրցումը տեղի կ'ունենայ Կիրակի, 7 դեկտեմբերին. Մտերուական վարձարանի սրահին մէջ. կեսօրէ ետք, ժամը 3:00էն 4:00 4րդ դասարան, 4:00էն 5:00 5րդ դասարան, 5:00էն 6:00 վեցերորդ դասարան:
- Իւրաքանչիւր մակարդակի շահողը պիտի ստանայ արժէքաւոր նուէր մը. իսկ բոլոր մասնակցողները պիտի ստանան յիշատակի նուէրներ:
- Յանկեալ տեղեկութիւններու համար հետեւի «Ազգակ»-ին:

«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
8:45.- «Աստղեր»
9:40.- «Առաւօտեան տոն»
10:05.- «Շոգեւոր խոհեր»...

«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»Ի ՎԱՂՈՒՄՆ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
9:30.- Քաղաքական լուրեր / հայերէն
10:00.- Անթիլիասի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարէն Ս. պատարագի ուղղակի ձայնասփռում...

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՏՈՔԹ. ԳԵՈՐԳ ՍԱՐԳՍԻԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 9 Նոյեմբեր 2003, Նոր Մարաշի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԴԱՄԱՍԿՈՍ ԴԱՄԱՍԿՈՍ
ԼՈՒՍՆԹԱԳ ՄԵԼԻՔԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 9 Նոյեմբեր 2003, Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՅԱՎՈՐ ՍԻՍԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 9 Նոյեմբեր 2003, Ժուճիկի Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՈՎԱՍՆԱ ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 9 Նոյեմբեր 2003, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՇԱՔԷ ԹՈՐՈՍԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 9 Նոյեմբեր 2003, Ս. Նշան Մայր եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՊԵՅՐՈՒԹ ԱՐԱՄ ԹՈՐՈՍԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 9 Նոյեմբեր 2003, Պէյրութի Անթիլիասի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ եւ Զեսայի Ա. Աստուածածին եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5586

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

11x11 grid for crossword puzzle 5586 with numbers 1-11 in both directions.

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- 1. Տախտակէ հողաթափ - Չարութիւն:
2. Պատկերազարդ - Պարտիզայանի գործիք:
3. Խօսք մտիկ ըրէ - Հաստատուիլ:
4. Ձեռքի մաս - Ապարահ:
5. Տաղաչափեալ քերթուած - Կրկնուած տառեր:
6. Զրահք թռչուն - Հայագատազրական պայքարի ռահվիրան:
7. Փշրել - Հարկերամեակ:
8. Մանրէ - Ռամկորէն՝ այր:
9. «Չորաւոր» խոհարարութիւն - Կանացի օտար շարաթափերթ - Դիտ:
10. Երուսաղէմի մէջ ըլլող մը - Ո՛ւր - Եւրոպական ընդլայնակեայ կազմակերպութիւն մը:
11. Բրտոն - Ունենան:

ՈՒՂԱՆԱՅԵԱՏ


- 1. Հոգածու - Շագանակ:
2. Աչազուրկ - Սպասուած փրկիչ:
3. Չատագով, պաշտպան - Շողկապ:
4. Արական անուն - 1922ի Խաղաղութեան Նոպելեան մրցանակակիր Ֆրիտոֆ:
5. Այրուբեննէ - Կասիլ:
6. Անեզր, անսահման - Ժամանուժ - Այրուբեննէ:
7. Ճանաչ - Զրային մեծ թռչուն:
8. Դէպքի մը պատահման վայր - Կէս՝ մունջ:
9. Պայթեան մայրաքաղաք - Սաւառնակ առեւտրային կենտրոն:
10. Տիրան Զրաքեանի գրչանունը - Հայ գուշակ:
11. Յարգախառն շարժում - Իշխանաւոր:

ԹԻԻ 5585

11x11 grid for crossword puzzle 5585 with numbers 1-11 in both directions.

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ



bezdig_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրութի սակարանին մէջ օտար դրամանշններու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.
Սուրիական թղթուկի 28,70 - 28,90 լ.ո.
Քուեյթեան տինար 5110,00 - 5135,00 լ.ո.
Յորդանանեան տինար 2121,00 - 2131,00 լ.ո.
Պահրէյնեան տինար 3985,00 - 4010,00 լ.ո.
Ա.Մ.Էմիրութեան տիրիամ 410,75 - 412,75 լ.ո.
Քարաբեան ռիալ 413,75 - 415,75 լ.ո.
Սէուտական ռիալ 402,00 - 404,00 լ.ո.
Օմանեան ռիալ 3895,00 - 3920,00 լ.ո.
Եգիպտական կիւնէ 220,00 - 230,00 լ.ո.
Անգլիական սթերլին 2500,00 - 2510,00 լ.ո.
Զուիցերիական ֆրանք 1093,00 - 1198,00 լ.ո.
Թրքական լիրա 99,50 - 100,00 լ.ո.
Կիպրական փունտ 2925,00 - 2950,00 լ.ո.
Ճափոնական հապար եէն 13,55 - 13,65 լ.ո.
Ամերիկեան տոլար 1501,00 - 1515,00 լ.ո.
Քանադական տոլար 1132,00 - 1137,00 լ.ո.
Աւստրալիական տոլար 1059,00 - 1064,00 լ.ո.
Եւրօ 1718,00 - 1728,00 լ.ո.

● ՈՍԿԻ
Անգլիական մէկ ոսկի 145,500 - 150,500 լ.ո.
Իրանեան մէկ ոսկի 131,000 - 136,000 լ.ո.
Օսմանեան մէկ ոսկի 121,000 - 126,000 լ.ո.
Մեքսիքական փետսո 695,000 - 715,000 լ.ո.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի 18,165,000 - 18,365,000 լ.ո.
Մէկ օնս ոսկի 376,75 - 377,25 \$
Մէկ օնս արծաթ 4,95 - 4,97 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.
Եւրօ 1.1394 - 1.1398
Քանադական տոլար 1.3281 - 1.3286
Զուիցերիական ֆրանք 1.3779 - 1.3784
Ճափոնական եէն 110.27 - 110.32
Մէկ սթերլին 1.6605 - 1.6609

Մէկ փոյար 580 դրամ
● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ
ԳԻՆԻ Ա. ճշդում ԳԻՆԻ Բ. ճշդում
Ա. կարգ 4,19 4,27
Բ. կարգ 4,22 4,22

ԼՈՒՍՆԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)
Այսօր ըրէք ինչ որ կ'ուզէք: Ամէն մարդի մէջ պիտի յաջողիք: Միայն թէ աւելորդ ծախսեր, այն մի՛ր ընէք: Օրը պիտի փայլի զուարթացի հանդիպումներով:
ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
Ամէն մարդ ձեզ պիտի փնտռէ այսօր, պիտի համաձայնի ձեզի հետ: Անշուշտ, դուք չէք զանոնք փնտրողները, բայց ձեր անձը պիտի ըլլայ հրապուրիչ:
ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)
Մարդիկ ձեզ քիչ անգամ կը տեսնեն այսօր, շուքուցի տեսքով ու ձեռով: Ընկերութեան մէջ պիտի փայլիք այսօր: Ձեր կարգին պիտի ունենաք հոգեկան գոհունակութիւն:
ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)
Ձեր բարեկամները ձեզ պիտի շրջապատեն սիրով: Այսպիսի տրամադրութիւն հագուազեկ է: Անոնց նեցուկը ձեզ պիտի ներշնչէ պահանջութեամբ: Երանելի էք:
ԱՌԻԻԲ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
Բարեկամ մը ձեզի պիտի առաջարկէ ձեր ասպարէզին յատուկ ընկերակցութիւն մը: Զգացուած էք այս առաջարկէն, բայց ժամանակ տուէք մտածելու, որովհետեւ այս առաջարկը երկար ժամանակի համար է:
ԿՈՅԱ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
Խանդավառութեամբ կը պատրաստուիք կատարելու ձեր երազած նամբորդութիւնը: Բայց կամքէ անկախ պատճառներով պիտի չկարենաք նամբորդել ձեր որոշած ու ընտրած անձին հետ:
ԿՇԻՌԲ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
Տնտեսական մարզին մէջ այսօր կրնաք դուր ձեզի արտօնել ինչ որ կ'ուզէք ընել: Օրը նպաստաւոր է պտտելու եւ զուարթանալու: Բախտաբեր է օրը:
ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Բախտին բոլոր բարեբերը ունիք ձեր ձեռքին, միայն թէ կը սպասէք յարմար առիթին: Գանձը օգտագործելու համար: Օրը իր հետ պիտի բերէ հաճելի անակընկալներ:
ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Դուք ձեզի խոստացած էք ամէն բանէ առաջ այսօր կատարել զուարթ հանդիպումներ: Ու ասիկա դժուար բան մը չէ: Միշտ գուրբ եղէք:
ԱՅՅԵՂԻ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Օրը պիտի ստեղծէ հրաշալի առիթներ՝ սիրալիք հանդիպումներ ունենալու բարեկամական կամ ընտանեկան մարդերուն մէջ: Այսօր բախտը պիտի ժպտի ձեզի:
ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)
Հանելի սեղանի մը շուրջ պիտի ունենաք ընտանեկան աղուոր հանդիպում մը: Ամէն ինչ պիտի անցնի զուարթ մթնոլորտի մէջ: Նոյն տրամադրութեամբ պարեցէք ձեր կեանքը:
ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)
Ձեր աչքերը փակեցէք եւ յանձնուցէք ճաշակին՝ ձեր կողակիցին կամ բարեկամին, որ ձեզ պիտի տանի վիպային վայր մը՝ զուարթանալու: Երանի ձեզի:

ՕՐԱՏԵՏՐ

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՉՈՐՄ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՄՆԵՐ «ՊԻԷԼ»Ի ՄԷՋ

«ՊԻԷԼ»ի մէջ մեծ աշխուժութեամբ ընթացող է ֆրանսագիր գրականութեան նուիրումը «Լիր ան ֆրանսէ է ան միր»ի ծրարի մէջ տեղի կ'ունենան նաեւ շարք մը ցուցահանդէսներ, որոնք գիրքէն ու ցուցադրութեան ու ցուցադրութեան միջոցով կ'ապաստանուին մեր կատարելու մղողը եւ «փարֆէն տ'էմփի» խորագիրը կրող ցուցահանդէսին: Այս բաժինով իմքուած են անուշահոտութեան պատմութեան տարբեր հանգրուանները յատկանշող բուրումնաւէտ իւղեր, ծաղիկներ, խոտեր եւ նիւթեր, արուակներ, որոնցմէ մաս մը կը փոխանցեն փարաւոններու ժամանակաշրջանի անուշահոտի մշակոյթին մասին հաստատեղեկութիւններ: Յուշարձաններու

ԱՅՍՕՐ

- Նուագահանդէս՝ «Փերմի տը ռեվի», «Շամփլեն» խումբի ելոյթ, ժամը 20:30ին, ՍԷՆ Ժոզէֆ համալսարանի «Փիեռ Ապու Խաբէր» սրահ:
- Վաւերագրական ժապաւեններու փառատօն՝ «Տոքիտեյ», ժամը 18:30էն սկսեալ «Մետիք» բառերասրահ:
- Հայ գիրքի 25րդ ցուցահանդէս, Կիլիկիոյ կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանի սրահ, մինչեւ 9 Նոյեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «20րդ դարու հայ գեղանկարիչներ», «Նոս՝ Գրք» ցուցարան, մինչեւ 21 Նոյեմբեր:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Մարքէ Գոլա», Ֆատիա Հատտասի գործերը, «Ալիս Մողապոյ» ցուցարան, մինչեւ 29 Նոյեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Պի-Ռուք», «Կեօթ» հիմնարկ, մինչեւ 19 Նոյեմբեր:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Քալըր եւր մայնտ», Ժուլիան Մէյքալի գործերը, «Էսփան Էս. Տէ.» ցուցարան, մինչեւ 15 Նոյեմբեր:
- Զետեղման արուեստի ցուցահանդէս՝ «Ըբրոս Բանթիլընթը», Ժիլման Մաքքի Պաշոյի գործերը, «Յընել» ցուցարան, մինչեւ 23 Նոյեմբեր:

ՕՂԵՆԵՒՅԹ
ՇԱԲԱԹ, 8 ՆՈՅԵՄԲԵՐ 2003
ՊԵՅՐՈՒԹ
ՄԱՍՍԱՐ ԱՄՊՈՏ
ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆ
ՅԵՐԵՎ՝ 24°C
ԳԻԾԵՐ՝ 17°C
ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 66%

ԱԶԳԱԿ 50 ՏՄԱՐԻ ԱՌԱՋ 8 ՆՈՅԵՄԲԵՐ 1953



ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱՉ ՏԻԿԻՆ ԶԵՓԻՌ ՇԱՆԹ ԿԸ ԶԵԿՈՒՅԷ ԱՄԵՐԻԿԱԿԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Լիբանանի Օգնութեան Խաչը, որուն գործունէութիւնը այնքան զանազան է մեր հասարակութեան կողմէ, 3 ամսուան դադարէ մը ետք, վերսկսու իր նոր շրջանի մշխտանքներուն:
Ինչպէս անցեալին, այս տարի եւս, նոր ընկերակցութիւններու զան լեցընել մեր շարքերը եւ իրենց բարձր ու կենսունակ ուժերը ի սպաս կը դնեն այս այնքան օգտաշատ կազմակերպութեան:
Պէյրութի մասնաճիւղի ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ 29 Հոկտեմբերին, 65 անդամուհիներու ներկայութեամբ:
Վարչութեան ատենապետ Շաքէ Նանիկեան բարի գալուստ մարտնչելով ընկերակցութեան կարգէն ժողովը միջոցաւ ղեկավարելու նպատակով՝ մարտնչելով անդամուհիներուն նուիրումը եւ ուժը:
Դիւանի անդամ ընտրուեցան Արփիկ Գազանեան՝ նախագահուհի եւ Հերմինէ Աֆարեան՝ քարտուղարուհի:
Օրակարգի հարցերուն լուծումէն ետք, վարչութեան թափուր մնացած երկու տեղերը լրացուեցան նոր անդամներու ընտրութեամբ, որով վարչութեան լիւր կազմը կը բաղկանայ հետեւեալներէն. ատենապետ Շաքէ Նանիկեան, ատենադպիր Զապէլ Թորոսեան, գանձապահ Վերթիկ Յեթթեկեան, հաշուապահ Արշալոյս Հակոբեանեան, գոյքապահ Հոփսիմէ Աւագեան, խորհրդակցանքի Մարի Գոնեալեան եւ Մարի Մանգիլեան:
(Յապաւուած)

ԱՅՍՕՐ 8 ՆՈՅԵՄԲԵՐԻՆ
1901.- Մահ՝ հայր Ղեւոնդ Ալիշանի:
1957.- Մահ Բազանեանցի Մարտիրոսի:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ՎԱՂԸ

Հ. Մ. Ը. Մ. - ԱՀՏ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ

Վաղը՝ Կիրակի, կեսօրէ ետք ժամը 2:30ին, Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ Հ. Մ. Ը. Մ. ֆուտպոլի բարեկամական մրցումը կը կատարէ Ահտի դէմ:

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿՈԼՖԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ՊԱՏՈՒԻՐԱՎՈՒԹԻՒՆԸ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ կէսօրէ առաջ ընդունեց Լիբանանի կոլֆի ֆետերասիոնի պատուիրակութիւնը մը, որ կ'ընդգրկէր ֆետերասիոնի նախագահ տոքթ. Յասայ Ալ-մէտտիւնը, փոխնախագահ Նապըմ Ռամատանը եւ քարտուղար Սամի Սոււան: Պատուիրակութեան կ'ընկերակցէր նաեւ Մարոքի մէջ տեղի ունեցած արաբական աշխարհի ախոյեանութեան Լիբանանը ներկայացնող կազմը:

Պատուիրակութիւնը նախարարին ներկայացուց Լիբանանեան կազմին արդիւնքները, ինչպէս նաեւ յառաջիկայ ամիսներուն Լիբանանի մէջ տեղի ունենալիք մրցաշարքերու մանրամասնութիւնները:

ՄՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՌՈՊԵՐԹՈ ԶԱՐԼՈՍ՝ ՎԻՐԱԻՐ

Ռէյալ Մատրիտի պրակտիցի յետապահ Ռոպերթ Զարլոս երէք շաբաթ պիտի չկարենայ դաշտ ներկայանալ վիրատու ըլլալուն պատճառով:

Ակումբի բժիշկներուն համաձայն՝ անոր ձախողութիւնը պատճառած է:

Հետեւաբար, Զարլոս դաշտ պիտի չներկայանայ Սեւիլլայի մէջ իր կազմի մրցումին: Ան նաեւ պիտի բացակայի 2006ի Մոնտիալի կտումի մրցումներու ծիրէն ներս Փերու - Պրակտի եւ Պրակտի-Ուրուկուէյ մրցումներէն:

Նշենք, որ Ռոպերթ Զարլոս վիրատուած էր անցեալ երեքշաբթի Սերպիա - Մոնթենեգրոյի մէջ, «Չէմփիըն»-ի ծիրէն ներս Փարթիպան Պելլրատի դէմ մրցումին:

Ռոպերթ Զարլոսի կազմը Սեւիլլայի դէմ պիտի մրցի վաղը:

Ստորեւ՝ Սպանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան շաբաթավերջի յայտագիրը (բոլոր մրցումները Պէյրութի ժամով՝ 6:00ին):

- ԱՅՍՕՐ**
- Ռէյալ Մատրիտ - Սերպիա Վիլո
 - Աթլետիքո Պիլպօ - Էսփանիոլ
 - Տեփոթիօ Բորուսա - Ռէյալ Մատրիտ
 - Վալենսիա - Ռասիոն Սանթանտեր
- ՎԵՐՍԿԻ**
- Ալպասթէթ - Մալալա
 - Օսասունա - Վալադոլիտ
 - Աթլետիքո Մատրիտ - Վիարէալ
 - Ռէյալ Մալորքա - Մուրսիա
 - Պարսելոնա - Ռէյալ Պէթիս
 - Սեւիլլա - Ռէյալ Մատրիտ

ԲԱԼՉԻՕ

ՎԱՂԸ՝ ՀՈՈՍԻ ՏԵՐՊԻՆ

Ապահովութեան խիստ միջոցառումներ տեղի կ'ունենան Ա. Էս. Ռոմա - Լացիո Ռոմա մրցումի իբրեւ նախապատրաստութիւն:

Լացիո պիտի փորձէ ցարդ անպարտելի Ռոմայի կազմը տապալել:

Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներու յայտագիրը (Պէյրութի ժամով):

- ԱՅՍՕՐ**
- Պրեշիա - Պոլոնիա
 - Սամտորիա - Էմփոլի
- ՎԱՂԸ**
- (Բոլոր մրցումները 9:30ին):
 - Ինթեր Միլան - Անքոնա
 - Եուվէ - Ռոմանիա
 - Փարմա - Ա. Սէ. Միլան
 - Փերուճիա - Լէչէ
 - Ռեճիսա - Մոտենա
 - Ռոմա - Լացիո

ԵՌԻ. Է. ԷՖ. Ա.Ի ԲԱԺԱԿ

ԱՆԵԼՔԱ ՆՇԱՆԱԿԵՑ, ԲԱՅՑ ՄԱՆՉԵՍԹԸՐ ՍԻԹԻ ՐԱԻԱՍԱՐԵՑԱԻ

Հինգշաբթի ուշ գիշերին վերջ գտան Եր. Է. ԷՖ. Ա.Ի բաժակի երկրորդ հանգրուանի երթի մրցումները: Այս ծիրէն ներս, Քեւին Քիլընի կազմը դաշտ ներկայացաւ լեհական Կրոշիին խումբին դէմ: Անելքա, որ ապաքինած էր, դաշտ ներկայացաւ եւ նշանակեց իր կազմին միակ կոլը, որ սակայն բաւարար չէղաւ պարտութեան մատնելու լեհական կազմը: Բ. կիսախաղին «կրակ կտրած» լեհերը յաջողեցան 60րդ վայրկեանին հասարեցնել արդիւնքը:

Ստորեւ՝ մրցումներուն արդիւնքները.

Վազիսթէպսիոր (Թուրքիա) - Լաճա (Ֆրանսա)	3 - 0
Սպարտակ Մոսկուա (Ռուսիա) - Տիմանո Պուրեշ (Ռումանիա)	4 - 0
Տիմանո Զաղրէպ (Նրուաթիա) - Տիմանո Գրոպի (Ռուսիա)	0 - 2
Շալքէ 04 (Գերմանիա) - Պրոնտպի (Դանիա)	2 - 1
Սլաւիա Փրակա (Չեխիա) - Լեւսկի Սոֆիա (Պուլկարիա)	2 - 2
Վալերենկէ (Նորվեգիա) - Ուիլյա Զրաքու (Լեհաստան)	0 - 0
Պորտո (Ֆրանսա) - Լարթ (Սլովակիա)	0 - 1
Իւրթէթ (Հոլանտա) - Օքսէն (Ֆրանսա)	0 - 0
Փանիոնիոս (Յունաստան) - Պարսելոնա (Սպանիա)	0 - 3
Վիտալա (Սպանիա) - Թորսթոն Մոսկուա (Ռուսիա)	2 - 0
Կէնցլերպիլիկի (Թուրքիա) - Սփորթինկ Լիգայոն (Փորթուգալ)	1 - 1
Սթեւո Պուրեշ (Ռումանիա) - Լիվըրպոլ (Անգլիա)	1 - 1
ՓԱՍՕՔ Սալոնիքա (Յունաստան) - Տեպրելէն (Հունգարիա)	1 - 1
Պորուսիա Տորթմունտ (Գերմանիա) - Սոշօ (Ֆրանսա)	2 - 2
Օսթրիա Սալցպուրկ (Աւստրիա) - Փարմա (Իտալիա)	0 - 4
ԷՖ. Սի. Պալ (Չեխիա) - Նիւքէլը (Անգլիա)	2 - 3
ԷՖ. Աի. Զոփենհայմ (Դանիա) - Ռէալ Մատրիտ (Սպանիա)	1 - 2
Ֆէյենուրտ (Հոլանտա) - Թեփիս (Չեխիա)	0 - 2
Ա. Էս. Ռոմա (Իտալիա) - Լալոնկ Սփիլթ (Նրուաթիա)	1 - 0
Փերուճիա (Իտալիա) - Արիս Սալոնիքա (Յունաստան)	1 - 0
Մանչեսթըր Սիթի (Անգլիա) - Կրոշիին (Լեհաստան)	1 - 1
Պեմֆիլթ (Փորթուգալ) - Մոլտէ (Նորվեգիա)	1 - 1
Վալենսիա (Սպանիա) - Մաքապի Լալոնկ (Իսրայէլ)	0 - 0

ԹԵՆԻՍ. «ՄԱՍԹԸՐԶ»


ՔԼԻՍԹԸՐԶ ԱՊԱՀՈՎԵՑ ԿԻՍԱԻԱՐՏԱԿԱՆԻ ՏՈՄԱՐ

Աղջկանց «Մասթըրք»ի Ա. հանգրուանի մրցումներուն պել-ճիքացի Քլիսթըրք արձանագրեց իր երկրորդ յաջողական յաղթանակը, այս անգամ տապալելով ամերիկացի Չանտա Ռուպինը:

Իր առաջին մրցումին, Քլիսթըրքի հայրենակից ժիւսթին Հենէն - Արտէն 7 - 5, 5 - 7, 7 - 5 արդիւնքով դժուար յաղթանակ մը արձանագրեց ռուս Անասթասիա Միքիմա՞յի դէմ:

Ամէլի Մորեսսօ, որ իր առաջին մրցումին տեղի տուած էր Չանտա Ռուպինի դէմ՝ պարտութեան մատնելով Էլէնա Տեմենիտեան պահեց կիսաարտական հանգրուան անցնելու իր յոյսերը:

Այսօր, առաւօտեան կանուխ ժամերուն ժիւսթին Հենէն - Արտէն պիտի ձակարկէ ձեռնփոխ Քափրիաթիի դէմ: Միսթիսա, իր կարգին, պիտի մրցի Ալ Սուկիյամայի դէմ:



Ժիւսթին Հենէն - Արտէն

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ԼԷՅՔԸՐԶ ՏԱՊԱԼԵՑ ՍԱՆ ԱՆԹՈՆԻՈՆ

Երէկ, Սան Անթոնիոյի «Էն. Պի. Սի. Սենթըր» մարզադաշտին մէջ 1992ի ախոյեան Սան Անթոնիո Սիթրք իր ուժերը չափեց նախորդ երէք տարեշրջաններու ախոյեան Լոս Անճելըս Լէյքըրքի դէմ... Եւ պարտուեցաւ 117 - 120 արդիւնքով, երկու օվըրթայմէ ետք:

Ինտիանա 87 - 81 արդիւնքով տապալեց Նիւ ձըրքին, իսկ Թորոնթօ 77 - 71 արդիւնքով յաղթեց Տալասի:

ՊՈՒՆՏԸՍԼԻԿԱ

ՏՈՐԹՄՈՒՆՏ - ՊԱՅԵՐՆ ԳԵՐՃԱԿԱՏՈՒՄ

Պունտըլիկայի եղանակի կարեւորագոյն մրցումներէն մէկը տեղի պիտի ունենայ վաղը, «Օլիմպիք» մարզադաշտին վրայ, երբ Պայերն Միւնիխ պիտի հիւրընկալէ Պորուսիա Տորթմունտը:

Ստորեւ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը (բոլոր մրցումները Պէյրութի ժամով՝ 4:30ին):

- ԱՅՍՕՐ**
- Հանովըր - Վերտըր Պրեմըն
 - Այնթրախթ Ֆրանքֆորթ - Շթուրթարթ
 - Հերթա Պերլիին - Պորուսիա Մէօնշտրնկա տապալի
 - Հանսա Ռոսթըր - Քայլըրպալտերթրն
 - Պոխում - Բէօլն
 - Ֆրայպուրկ - Վոլֆսպուրկ
 - Համպուրկ - 1860 Միւնիխ
- ՎԱՂԸ**
- Պայերն Լէւերքուըրն - Շալքէ 04
 - Պայերն Միւնիխ - Պորուսիա Տորթմունտ

ՀԱՅՐԵՆԻ ԾԱՆՐԱԲԱՐՉՆԵՐ ԿՈՒՂՂՈՒԻՆ ՔԱՆԱՏԱ

Այսօր գիշեր երեւանէն Քանատա կ'ուղղուին հայրենի 8 ծանրաբարձներ, որոնցմէ մէկը կը ներկայացնէ իզական սեռը: Անոնք իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Վանքուվըրի մէջ տեղի ունենալիք աշխարհի ախոյեանութեան: Ախոյեանութեան ոչ միայն պիտի տրամադրուին մետալներ, այլ նաեւ լաւագոյն արդիւնքները արձանագրող կազմերը իրաւունք պիտի ունենան մինչեւ 6 ծանրաբարձներ ուղարկելու Ողիմպիական խաղերուն:

Նշենք, որ երկու անգամ գերծանր կշիռքի եւրոպայի ախոյեան հանդիսացած Աշոտ Դանիէլեան եւ Ռաֆայէլ Չախոյեան իրենց խմբակիցներուն պիտի միանան աւելի ուշ, տրուած ըլլալով, որ իրենց մրցումները տեղի պիտի ունենան ախոյեանութեան վերջին օրը՝ Նոյեմբեր 22ին:

● ԵՐԷԿ Սէն Փեթրսպուրկի մէջ սկսաւ Սամպոյի աշխարհի ախոյեանութիւնը, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն հայրենի երէք մարզիկներ:

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՄՈՆԱԲՕ ՊԻՏԻ ՓՈՐՁԷ ԱՄՐԱՊՆԴԵԼ ԻՐ ԴԻՐՔԸ

Ֆրանսայի ֆուտպոլի ախոյեանութեան այսօրուան մրցումներուն ամէնէն ճակատագրական հանդիպումը Ռէն-Լիլ ճակատումն է, որովհետեւ այդ խաղին արդիւնքէն կախեալ է Լիլի մարզիչ Քլոտ Փուէլի ապագան:

Ստորեւ՝ շաբաթավերջի յայտագիրը (Պէյրութի ժամով):

- ԱՅՍՕՐ**
- Լը Մանս - Մէթը
 - Նանթ - Փարիզ Սէն ժերմէն
 - Նիս - Պարիս
 - Ռէն - Լիլ
- ՎԱՂԸ**
- Աժաքսիօ - Մոնպը
 - Օքսէն - Կէնկան
 - Լանս - Մոնփելիէ
 - Սոշօ - Թուլուզ
 - Մարսէյ - Լիոն
 - Սթրասպուրկ - Պորտօ

ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐՍԵՆԱԼ - ԹՈԹԵՆՀԱՄ ՏԵՐՊԻ

Արսենալ 8 օրուան մէջ 3 մրցում կատարած պիտի ըլլայ այսօր, երբ դաշտ իջնէ Թորենհամի դէմ:

Ստորեւ՝ յայտագիրը.

- ԱՅՍՕՐ**
- (Բոլոր մրցումները 2:30ին)
 - Արսենալ - Թորենհամ
 - Ասթոն Վիլլա - Միտլըպպորօ
 - Պոլթըն - Սաութհէմթըրն
 - Չարլթըն - Ֆուլհամ
 - Փորթսմութ - Լիծ
- ՎԱՂԸ**
- Չելսի - Նիւքէլը
 - Լիվըրպոլ - Մանչեսթըր Եունայթըտ 3:45ին
- ԵՐԿՈՒՇԱԲԹԻ**
- Պլէքպըրն - Էվըրթըն 10:00ին

ՂԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Կազմակերպութեամբ՝
**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՆՈՒՔԵԼԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԱՍԻՐՈՍ ԵՐԱՅՐԱՎՅՈՒԹԵԱՆ**

Նիւթ՝
**«ԲԱՐԵՇՐՁՈՒԹԻՒՆԸ
ԳԻՏՈՒԹԻՒՆ Է, ԹԷ ՀԱԻԱՏԱԼԻՔ»
(EVOLUTION)**

Կը դասախօսէ՝
ԴՈԿՏ. ԱՐԻ ԹՕՓՈՒՁԻԱՆԵԱՆ
(Գիտաշխատող Ֆրանսայի
Գիտահետազոտական Ազգային Կեդրոնի
եւ
Շրատարակիչ «1700ամեակի
Աստուածաշունչ»ին)

Տեղի պիտի ունենայ Կիրակի, 9 Նոյեմբեր 2003,
կէսօրէ ետք ժամը ճիշդ 4:00ին,
միութեան աղօթատեղիին մէջ,
Կեդրոն (ԱՅԵՏԻ շէնքին ետեւ):

ՇՐԱԿԵՐ

ՇԻՐԱԲ - ՓՈՒԹԻՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՓԱՐԻԶԻ ՄԵՋ

ՍԱՐԴԱՅԻՆ ԻՐԱԲԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԽՍՏԻ ԿԸ ԶԵՆԱԴԱՏԵ ՈՒՄՍԻՈՅ ՄԵՋ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՈՂ ՍԱՐԴԱՅԻՆ ԻՐԱԲԱՆՑ ԲՈՆԱԲԱՐՈՒՄՆԵՐԸ

ԿԱԶԱՅԻ ՄԵՋ ԾԱՆՐ ԲԱԽՈՒՄՆԵՐ՝ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՒԺԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Պաղեստինցի երեք արմատականներ եւ մանուկ մը սպաննուեցան երէկ իսրայէլեան ուժերուն կողմէ Կապայի մէջ տեղի ունեցած բախումներու ընթացքին:

11 տարեկան Մահմուտ Քայէտ սպաննուեցաւ երէկ առտու Կապա - Իսրայէլ սահմանին մօտ, ուր կը խաղար ընկերներուն հետ, յայտնեցին պաղեստինեան ապահովական եւ հիւանդանոցային աղբիւրներ: Ականատես մը, որ մօտակայ պարտէզն էր, ըսաւ, որ իսրայէլացի զինուորներ կրակ բացած են մանուկներուն վրայ:

Կապայի հարաւ-արեւելեան շրջանին մէջ ալ սպաննուեցան «Աքսայի Նահատակներու Փաղանգներ»-ու երկու հետեւորդներ, որոնք բախում ունեցած էին իսրայէլացի զինուորներու հետ: Նոյն ընտանիքին պատկանող չորս այլ անդամներ վիրաւորուած էին:

Բախումներ արձանագրուեցան նաեւ Կապայի այլ շրջաններու մէջ Մաշափ գաղթականին մէջ, ուր ըստ պաղեստինեան աղբիւրներու, սպաննուած է Համասի հետեւորդ մը: Ռաֆահի մէջ ալ վիրաւորուած են երկու պաղեստինցիներ, որոնցմէ մէկը երեք տարեկան մանուկ մըն է:

●ՅՈՐԴԱՆԱՆ ռազմական Միջին Արեւելքի խաղաղութեան ոչ պաշտօնական ծրագիրը, զայն «չափազանց դրական ճիգ» նկատելով: Արտաքին գործոց նախարար Մարուան Մուաշար կ'ակնարկէր ժրնեի նախաձեռնութեան:

●ԻՍՐԱՅԷԼԻ մէջ կազմակերպուած հարցախոյզի մը արդիւնքներու համաձայն, Իրան եւ ոչ թէ հրէական պետութիւնը մեծագոյն սպառնալիքն է համաշխարհային խաղաղութեան:

●ԱՅԼ հարցախոյզ մը ցոյց տուաւ, որ վարչապետ Արիէլ Շարոնի ժողովրդականութիւնը կը նահանջէ Իսրայէլի մէջ: Հարցախոյզին մասնակցած իսրայէլացիներուն 57 առ հարիւրը դժգոհ է Շարոնի վարած քաղաքականութենէն: 34 առ հարիւրը միայն գոհ է վարչապետէն:

(ԱՅՓ)

ԷԶՍԻԱԾԻՆԸ ԸՍՏ ՕՏԱՐ ՈՒՂԵՒՈՐՆԵՐՈՒ

ԷՋ 4

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱԶԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Կը ներկայացնեն՝ ԱՊՈՒՄԷ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ



Նոյեմբեր 18ին ԻՒՆԷՍՔՕ ի սրահին մէջ երեկոյեան 8:30-ին տոմսերը՝ Trading Places 01 611600, CD-Théque Ashrafieh - ABC. Համազգայինի գրախանութ, Նարեկացի գրախանութ եւ Ազգային Դպրոցներն



Շիրաք կ'ընդունի Փութիցը

րակշռութեան:

Անիկա բոլոր հարցերուն գծով քննութիւններու կոչ կատարած է:

Միւս կողմէ, յանձնախումբը նաեւ քննադատած է անոնք, որոնք կը փորձեն Չեչենիոյ անկախութիւնը պահպանելու համար, որոնք կը փորձեն Չեչենիոյ անկախութիւնը պահպանելու համար, որոնք կը փորձեն Չեչենիոյ անկախութիւնը պահպանելու համար:

Ե. ՄԻՈՒԹԻՆԸ ՏԱՐԱԿԱՐԻՑԵ Է ՊԵՐԼՈՒՄԵՆՏԻ ԸՅՏ

Մինչ այդ, Եւրոպական Յանձնաժողովը երէկ յայտարարած է, թէ համաձայն չէ Իտալիոյ վարչապետ Սիլվիո Պերլուսոնիի «Եւրոքոս» ընկերութեան կամ Չեչենիոյ մասին անոր կատարած յայտարարութեան:

Յանձնաժողովը, վերահաստատելով յատկապէս իր մտահոգութիւնը «Եւրոքոս» հարցին եւ օտար ներդրումներու վրայ անոր հետեւանքներուն մասին, նաեւ ըսած է, որ Պերլուսոնիի արտայայտութիւնները Ե. Միութեան անդամ պետութիւններու հետ «նոյն ալիքին վրայ չեն գտնուիր»:

Հոռմի մէջ նախագահ Վլատիմիր Փութինի հետ վեհաժողովի մը աւարտին, Պերլուսոնիի Հինգաբքի օր ստանձնած էր Փութինի «փաստաբան»ին դերը եւ եւրոպական մամուլը ամբաստանած Չեչենիոյ կացութեան մասին «պատ-

մութիւններ պատմելու» յանցանքով:

Ե. Յանձնաժողովին բանբերը՝ Ռեյո Քեմփիլեն, դիտել տուած է երէկ, որ թէ «Եւրոքոս»ի հարցը «ներքին դատական» հարց մըն է Ռուսիոյ համար, սակայն անիկա աւելի լայնածիր հետեւանքներ ունի:

«Օտար եւ յատկապէս եւրոպացի գործարարներ իրաւունք ունին վստահ ըլլալու, թէ ներդրումի որոշ ապահովութիւն մը երաշխաւորուած է Ռուսիոյ մէջ», շեշտած է ան:

ՇԻՐԱԲ - ՓՈՒԹԻՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Փութին երէկ Հոռմի մեկնած է Փարիզ, ուր տեսակցութիւն ունեցած է նախագահ Ժաք Շիրաքի հետ: Երկու կողմերուն միջեւ բանակցութիւնները Փարիզի եւ Մոսկուայի միջեւ միջոց մը կը նկատուին երկկողմանի արդէն իսկ ուժեղ կապերը աւելի եւս ամրապնդելու:

Փարիզ Հոկտեմբեր 25էն ի վեր, երբ «Եւրոքոս»ի գործադիր տնօրէն Միխայիլ Խոտորովսքին ձերբակալուած էր, որեւէ յայտարարութիւն չէ կատարած այդ գծով:

Սակայն Չորեքշաբթի օր, Ֆրանսայի ելեւմուտքի նախարար Ֆրանսիս Մէր ըսած է, որ «Եւրոքոս»ի հարցը արագօրէն պիտի լուծուի, կոչ ուղղելով ֆրանսական ընկերութիւններու՝ Ռուսիոյ մէջ իրենց ներկայութեան վարկ տալու:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

●ԵՐԵՍՓՈՒՍԱՆ Նեպոլի Տը Ֆրէյժ երէկ կոչ ուղղեց լիբանանցի պատասխանատուներուն՝ լրջօրէն վարուելու պաղեստինցի գաղթականներու բնակեցման նման վտանգաւոր ծրագիրի մը հետ: Ան շեշտեց, որ պէտք է ամենայն զգուշութեամբ վարուիլ նշեալ հարցին հետ, որովհետեւ Միացեալ Նահանգներ որեւէ ատեն կրնան ամէն բան պարտադրել, աշխարհի չորս ծայրերուն մէջ:

●ԱՐՏԱՔԻՆ հարցերու խորհրդարանական յանձնախումբի նախագահ Էրեսփոխան Ալի Խալիլ երէկ ընդգծեց, որ հարկ է ամէն գնով պայքարիլ Ուաշինկթընի կողմէ միջազգային կարծիքին վրայ պարտադրուող պաղեստինցի գաղթականները բնակեցնելու ծրագիրին դէմ:

●ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ նախարար Մահմուտ Համմուտ երէկ Եարպէի մէջ ընդունեց բանակի ընդհանուր հրամանատար Վօր. Միշէլ Սլէյմանը, որուն հետ քննարկեց ապահովութեան եւ բանակին առնչուող շարք մը հարցեր:

ՄԱՆԻԼԱՅԻ ՕԴԱԿԱՅԱՆԻՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ԱՇՏԱՐԱԿԸ «ԳՐԱՒՈՒԵՅԱՒ»

Երէկ, Ֆիլիփինի մայրաքաղաք Մանիլայի միջազգային օդակայանին հսկողութեան աշտարակը քանի մը ժամուան համար գրաւուեցաւ երկու զինեալներու կողմէ, որոնք կը պահանջէին, որ երկրին կառավարութիւնը կասեցրնէ փտածութիւնը...

Ոստիկանութիւնը, սակայն, յաջողեցաւ վերստին հսկակշիռի տակ առնել աշտարակը, սպաննելով երկու զինեալները, որոնցմէ մէկը 1990ական թուականներուն երկրին օդանաւորութեան բարձրագոյն մարզին մէջ կը վարէր պատասխանատու պաշտօնը:

ՎԵՐՁԻՆ ԺԱՍ

ՊԱՂԵՍՏԻՆՅԻՔ Ի ՎԵՐՁՈՅ ՀԱՄԱԶԱՅՆԵՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ

Երէկ ուշ գիշերին հաղորդուեցաւ, որ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատի Ֆաթի շարժումը ի վերջոյ կրցած է համաձայնի վարչապետ Սիմէտ Քորէյի հետ՝ կառավարութեան մէջ ներքին գործոց նախարարի պաշտօնին համար, որ պիտի վստահուի Հաքամ Պալաուիի, որ Արաֆատի մօտ անձնատրուութիւն մըն է:

1994ԻՆ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՄԵՋ ՅՐԵԱԿԱՆ ԿԵԴՐՈՒՆ ԲՍԲԱՅՄՐԱՆ ԳԾՈՎ

ԻՐԱՆ ԴԱԻ ԿԸ ՆԿԱՏԵ ԻՐԵՆ ՎԵՐԱԳՐՈՒՈՂ ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐԸ

ԹԵՀՐԱՆ, 7 (ԱՅՓ).- Իրան յայտարարեց, որ այն վկայութիւնը, որ ենթադրաբար կը հաստատուէ, թէ Իրանցի դիւանագետներ կազմակերպած են հրէական կեդրոնի մը ուժեղացումը (1994ին, Արժանիքի մէջ), քաղաքական դաւ մըն է Իսլամական Հանրապետութեան դէմ:

Իրանցի նախկին գործակալ մը Չորեքշաբթի օր վկայած էր, թէ Թեհրան ծրագրած էր գործողութիւնը: Ան ըսած էր, թէ օրին, Մոհսէն Ռապայանի մշակած էր ծրագիրը եւ իրահանգած գործողութիւնը: Ռապայանի Պուէնոս Այրէսի մէջ Իրանի դեսպանատան մշակոյթի կցորդն էր:

Իրանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Համիտ Ռեպա Ասեֆի անհիմն ու սուտ որակեց Ապուլիսաէմ Մեսպահիի վկայութիւնը: Ասեֆի աւելցուց, որ Իրանցի դիւանագետներու ամբաստանութիւնը օրինական որեւէ հիմք ու փաստ չունի:



ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

- AT HOME
 - Wheelchair
 - Walker
 - Electric Bed
 - Manual Bed
 - Water Mattress
 - Cans
 - Sticks
 - Serum Tripod
 - Walking Frame

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen
- We Also Provide
- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

ՅՈՒՑԱՍՐԱԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ ԳՐԱՆՆԵՆԱԿ՝ ԱՅՇԻԼ, ԱՅԵՏԻ ՇԵՆԸ, Բ. ՅԱՐԿ ԵՆՆ. (01) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.

